ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 2

ՀՀԿԳՄՍՆԳՀԾՁԲ-24/24_ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգով ուսուցման ծրագրերի հետ կապված ծառայությունների գնման գործընթացի գնահատող հանձնաժողովի նիստի

Հայտերի բացումը տեղի ունեցավ 29.12.2023թ. ժամը 12:30-ին Էլեկտրոնային գնումների www.armeps.am կայքի միջոցով:

Գնահատող հանձնժողովի կազմը.

Հանձնաժողովի նախագահ՝ Կարեն Մնացականյան /գնահատող/

Հանձնաժողովի անդամ՝ Ամալյա Քոչարյան /գնահատող/

Մարիամ Գիգոյան /գնահատող/

Ռուզաննա Համբարձումյան /բացող/

Կարինե Սիմոնյան /բացող/

Հանձնաժողովի քարտուղար՝ Աննա Սիմոնյան

1. Տեղեկատվություն օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից՝ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի հիմնավորումների մասին.

1.1 **ՀՀԿԳՄՍՆԳՀԾՁԲ-24/24** ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի վերաբերյալ հիմնավորումներ չեն ներկայացվել:

2. Տեղեկատվություն հայտեր ներկայացրած մասնակիցների մասին.

2.1 ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից էլեկտրոնային եղանակով կազմակերպված **ՀՀԿԳՄՍՆԳՀԾՁԲ-24/24** ծածկագրով գնման ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

Հ/Հ	Մասնակիցների անվանումները	Էլ. Հասցեները
1	«Վահրամ Թոքմաջյան Վարդանի» Ա/Ձ	v.toqmajyan@gmail.com
2	«Աութսորս» ՍՊԸ	info@osllc.am
3	«Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան» հիմնադրամ	sh.antonyan@gmail.com

3. Տվյալներ հայտերի կազմման և ներկայացման՝ հրավերի պահանջներին համապատասխանության մասին.

3.1 Մասնակիցների կողմից ներկայացված հայտերը կազմվել և ներկայացվել են հրավերի պահանջներին համապատասխան:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

4. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը.

4.1 Մասնակիցները ներկայացրել են հետևյալ գնային առաջարկները.

Հ/Հ	Նախահաշվային գինը, ՀՀ դրամ	Մասնակիցների անվանումները					
		«Վահրամ Թոքմաջյան Վարդանի» Ա/Ձ		«Աութսորս» ՍՊԸ		«Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան» հիմնադրամ	
		Առաջարկված գինը, ՀՀ դրամ					
		Առանց ԱԱՀ	Ներառյալ ԱԱՀ	Առանց ԱԱՀ	Ներառյալ ԱԱՀ	Առանց ԱԱՀ	Ներառյալ ԱԱՀ
1	39500000	30480000	30480000	31487000	37784400	24166667	29000000

5. Մասնակիցների ներկայացրած փաստաթղթերի՝ առկայության և սահմանված պայմաններին համապատասխանության գնահատման մասին.

5.1 Մասնակիցների կողմից ներկայացրած փաստաթղթերի առկայության և դրանց սահմանված պայմաններին համապատասխանության գնահատման նպատակով հանձնաժողովի նիստը կասեցնել և շարունակել այն հանձնաժողովի կողմից փաստաթղթերը հրավերով սահմանված ժամկետում ուսումնասիրելուց հետո, ինչպես նաև հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 67-րդ կետն ու ՀՀ ֆինանսների նախարարության 16.05.2023թ թիվ 03/26-1/12074-2023 գրությունը **«Վահրամ Թոքմաջյան Վարդանի» Ա/Ձ** –ի և **«Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան» հիմնադրամի** կողմից կանխիկ փողի ձևով ներկայացված հայտի ապահովումների իսկությունը ստուգելու նպատակով ՀՀ ֆինանսների նախարարություն դիմելուց ու պատասխանը ստանալուց հետո, բայց ոչ ուշ քան սույն ընթացակարգի հրավերի 8.2 կետի սահմանված ժամկետում ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն Վազգեն Սարգսյան 3, Կառավարական տուն 2, 6-րդ հարկ, 611 սենյակ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի նիստը շարունակվեց 18.01.2024թ. ժամը 12:00-ին

6. Կանխիկ փողի ձևով ներկայացված հայտի ապահովումների իսկության ստուգման արդյունքների մասին.

6.1 ՀՀ ֆինանսների նախարարության 12.01.2024թ թիվ 12/12-1/726-2024 գրությամբ հաստատվել է **«Վահրամ Թոքմաջյան Վարդանի» Ա/Ձ** –ի և **«Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան» հիմնադրամի** կողմից կանխիկ փողի ձևով ներկայացված հայտի ապահովումների իսկությունը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

7. Տվյալներ մասնակիցների հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության և սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.

7.1 «Աութսորս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը, ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

7.2 «Վահրամ Թոքմաջյան Վարդանի» Ա/Ձ-ի կողմից ներկայացված հայտում առկա չեն հրավերով պահանջվող փաստաթղթերը, մասնավորապես՝ բացակայում են առաջարկվող աշխատակազմի մասին տեղեկանքում ներկայացված մասնագետների որակավորումը հավաստող փաստաթղթերի (դիպլոմ կամ գիտական աստիճանի հավաստագիր) պատճենները:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

7.3 «ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ կողմից ներկայացված հայտում առկա չեն հրավերով պահանջվող փաստաթղթերը, մասնավորապես՝ բացակայում են առաջարկվող աշխատակազմի մասին տեղեկանքում որպես արվեստաբան/ մշակութաբան ներկայացված Արա Հակոբյանի կողմից հաստատված գրավոր համաձայնությունը՝ իրականացվելիք աշխատանքներում վերջինիս ներգրավվելու մասին, ինչպես նաև որակավորումը հավաստող փաստաթղթերի (դիպլոմ կամ գիտական աստիճանի հավաստագիր, հրապարակումների ցանկ կամ և հավելվածով ներկայացված ուսումնական նյութը դասավանդելու վերաբերյալ ցանկացած հիմնավորում) պատճենները:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

8. Գնահատման գործընթացի կասեցման մասին.

8.1 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը՝ կասեցնել գնահատման գործընթացը և առաջարկել **«Վահրամ Թոքմաջյան Վարդանի» Ա/Ձ**-ին և **«Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան» հիմնադրամ**ին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել 7.2 և 7.3 կետերով արձանագրված անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

8.2 Հանձնաժողովի նիստը շարունակել մասնակիցների կողմից փաստաթղթերը ստանալուց և ուսումնասիրելուց հետո՝ 2024թ հունվարի 24-ին, ժամը 12:45-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5 դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի նիստը շարունակվեց 24.01.2024թ. ժամը 12:45-ին

9. Գնման գործընթացի գնահատման ընթացքում արձանագրված անհամապատասխանությունների շտկման մասին.

9.1 «Վահրամ Թոքմաջյան Վարդանի» Ա/Ձ-ն և **«Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան» հիմնադրամը** սահմանված ժամկետում շտկել են հանձնաժողովի կողմից 7.2 և 7.3 կետերով արձանագրված անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5 դեմ 0:

10. Տվյալներ առաջին և հաջորդաբար այլ տեղեր զբաղեցրած և մերժված մասնակիցների մասին.

10.1 Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածը՝ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից.

1-ին տեղ զբաղեցրած /ընտրված/ մասնակից ճանաչել «Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան» հիմնադրամին,

2-րդ տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «Վահրամ Թոքմաջյան Վարդանի» Ա/Ձ-ին,

3-րդ զբաղեցրած մասնակից ճանաչել «Աութսորս» ՍՊԸ-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5 դեմ 0:

11. Գնահատման արդյունքների մասին.

11.1 Հրապարակել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն անգործության ժամկետ սահմանել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը, որից հետո ընտրված մասնակցին էլեկտրոնային ձևով գնումների կազմակերպման կարգին համապատասխան՝ ARMEPS համակարգով, ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0

Գնահատող հանձնաժողով՝

_____ Կարեն Մնացականյան /նախագահ/

_____ Ամալյա Քոչարյան

_____ Մարիամ Գիգոյան

_____ Ռուզաննա Համբարձումյան

_____ Կարինե Սիմոնյան

_____ Աննա Սիմոնյան /քարտուղար/